

«ԷՋԵՐ ՇՆՈՐՀՔ ՊԱՏՐԻԱՐՔԻ ՕՐԱԳՐՈՒԹԵՆԷՆ»
Հատոր Ա. 1935—1944

(Գրախոսական)

1989 թ. Ստամբուլում լույս տեսավ հոգելույս Պատրիարքի օրագրությունների առաջին հատորը, որն ընդգրկում է նրա հոգևոր ծառայության սկզբի տասը տարիները: Սույն հատորը խմբագրել և ընթերցող հասարակության սեղանին է դրել պոլսահայ մտավորական, հայոց լեզվի ուսուցչուհի և «Մարմարա» օրաթերթի փոխխմբագիր Մաքրուհի Պ. Հակոբյանը:

Սույն հատորի վերջին էջում տրված երեք տողանոց հայտարարությունից հայտնի է դառնում, որ 1986—88 թթ. սույն աշխատությունը հոդվածաշարքի ձևով նախօրոք լույս է տեսել Ստամբուլում հրատարակվող «Մարմարա» թերթում:

Այս գիրքը հարուստ է բազմաթիվ սև-սպիտակ և գունավոր լուսանկարներով: Լուսանկարների մեծագույն մասը ներկայացնում է Շնորհք Պատրիարքին, ինչպես նաև Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց մայրավանքը, տեղի քրիստոնեական սրբատեղիները և վերոհիշյալ տասնամյակում ապրած ու գործած հայ հոգևորականությանը:

Շնորհք Պատրիարքի այս աշխատությունը թեպետև ամբողջությամբ հյուսված է իր անձի շուրջ, սակայն այն կարդացվում է մեծ հետաքրքրությամբ, որովհետև ամբողջ բովանդակությունն առնչվում է և ուղղակի կապ ունի մեր ազգային-եկեղեցական ցավերի, թերությունների ու պակասությունների հետ:

Հանգուցյալ Սրբազանն իր համառ կամքով և աշխատասիրությամբ, հակառակ իր բազմազբաղության և իր ուսերի վրա ծանրացած դժվարին և պատասխանատու բեռին, գրեթե ամեն օր ժամանակ է գտել, ավելի քան կես դար, նոթագրելու օրվա կարևոր անցուդարձերը, թղթին հանձնելու իր մտորումները, դատողություններն ու եզրակացությունները: Նրա արձանագրած եկեղեցական, ընկերային և փիլիսոփայական մտորումները համազգային հնչեղություն ունեն: Շուրջ կես դար առաջ նրա կատարած դատողությունները կարծեք այսօրվա համար են գրված միևնույն ժամանակ: Որով այս հատորի բարոյական արժեքը կրկնակի չափով բարձրանում է ընթերցողի աչքին:

Նախ կանգ առնենք հոգելույս Շնորհք Պատրիարքի համառոտ կենսագրության վրա: Նա ծնվել է 1913 թ. Թուրքիայի Յոզկատի շրջանի Իյդե նախկին հայաբնակ գյուղում, տեղի հարուստ և ազդեցիկ ընտանիքներից մեկի՝ Միհրան Գալուստյանի հարկի տակ: 1915 թ. զոհվել է հայրը, և նա մնացել է որբ: Վաղամեռիկ են նաև մեկ քույրն ու եղբայրը: Մնացել են միայն մայրն ու երկրորդ քույրը: Արշակը, որ հետագայում դառնալու էր Թուրքիո հայոց Պատրիարքը, կյանքի առաջին տարիներին ապրեց շատ տխուր օրեր, մնալով նախ Թալասի (Կեսարիա), ապա Ճիպեյլի (Լիբանան) և վերջում Նազարեթի (Պաղեստին) որբանոցներում: 1927 թ., 14 տարեկան հասակում, նա ընդունվել է Երուսաղեմի Ժառանգավորաց վարժարանը, երբ իր կյանքն այդ օրվանից նվիրում է ծառայելու հոգևոր ապասավորության: 1932 թ. ավարտելով սույն վարժարանը, նա ձեռնադրվել է սարկավագ, իսկ 1935 թ. Թորգոմ Պատրիարքի ձեռամբ Արշակ սարկավագը ձեռնադրվել է կուսակրոն քահանա, վերանվանվելով Տ. Շնորհք աբեղա: Նրա առջև բացվում է հոգևոր ծառայության լայն ասպարեզ և զբաղեցնում զանազան պաշտոններ՝ վանքում և այլուր: Այսպես նա դառնում է նախ Պատրիարք Հոր գավազանակիրը, ապա հայոց վանքի տպարանի տեսուչը, Հայֆա քաղաքի հայոց համայնքի հոգևոր հովիվը, 1941—44 թթ. նշանակվել է Անթիլիասի դպրեվանքի տեսուչ և դասախոս, որից հետո նա հրավիրվել է Լոնդոն (1945—48) և ապա Միացյալ Նահանգների Նյու Ջերսի (1948—52)՝ որպես հոգևոր հովիվ տեղի հայության: 1952-ին Շնորհք վարդապետն ընտրվել է Կալիֆոռնիայի հայոց թեմի առաջնորդ: 1955 թ. սեպտեմբերի վերջին Ս. Էջմիածնում ձեռնադրվել է եպիսկոպոս՝ ձեռամբ Վազգեն Ա Հայրապետի: 1957 թ. Շնորհք եպիսկոպոսը նշանակվել է Երուսաղեմի վանքի լուսարարապետ, իսկ 1961 թ. ընտրվել է Թուրքիո հայոց Պատրիարք:

Հակառակ ներքին և արտաքին բազում դժվարություններին, Շնորհք Պատրիարքն իր ջանասիրության և իմաստության շնորհիվ ծաղկեցրել է Կ. Պոլսի Պատրիարքական պատմական Աթոռը, արդյունավորելով շուրջ երեսուն տարիների իր պատրիարքության տարիները՝ սիրված իր ժողովրդի և Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա-ի կողմից, միշտ հարգված Թուրքիո պետական բարձրագույն իշխանությունների կողմից:

«Ամենապատիվ Տ. Շնորհք արքեպիսկոպոսը մեծապես բարձրացրեց Պոլսո պատրիարքարանի հեղինակությունը, շուտով դարձավ քրիստոնեական աշխարհի ճանաչված և հարգված դեմքերից մեկը», գրված է նրա մահախոսականում («Հայրենիքի ձայն» 14 մարտի 1990 թ.):

Հոգելույս Սրբազանը «մեր շնորհալի և հավատավոր հոգևորականներից մեկն է: Պարկեշտ, կարգապահ ու մաքրակենցաղ եկեղեցական է նա, որ արտառուչ հավատարմությամբ ծառայել է իր ժողովրդին և Եկեղեցուն, բարձր կանգնած լինելով իր հոգևորականի կոչման և պարտականության դիրքերում, օրինակելի՝ իր նախաձեռնողությամբ և բծախնդրությամբ, իր բարեմուն և հեզահամբույր բնավորությամբ» (տես «Էջմիածին» ամսագիր, 1955, հոկտեմբեր-նոյեմբեր, էջ 95), գրված է Մայր Աթոռի պաշտոնաթերթում, նրա եպիսկոպոս ձեռնադրության առթիվ:

«Մեր Եկեղեցին ու համայն հայությունը ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի Ձեր բարձր անձին մեջ հիսուն տարիներե ի վեր՝ տեսած են և գնահատած բարի հովիվը, նվիրյալ հոգևորականը, լուսամիտ դաստիարակը, Եկեղեցվո ազնիվ սպասավորը միշտ մաքուր հոգիով, միշտ մաքուր ձեռ-

քերով, Ձեր պաշտոնավարությանց ընթացքին, հԵրուսաղեմ, ի Լոնդոն, հԱմերիկայի Միացյալ Նահանգներ և վերջին քառորդ դարուն հայոց Պատրիարքական Աթոռին վրա ի Ստանբուլ», գրում է Վազգեն Ա Հայրապետն Իր 22 հոկտ. 1985 թ. հայրապետական սրբատառ կոնդակում (№ 1400), ուղղված հոգելույս Շնորհք Պատրիարքին՝ նրա հիսնամյա հոգևոր ծառայության առթիվ:

Տ. Շնորհք Պատրիարքի գրիչը շատ բեղմնավոր է եղած: Նա հեղինակ է շուրջ երկու տասնյակ արժեքավոր հոգևոր բնույթի գրքերի, որոնք ունեն եկեղեցական, աստվածաբանական, կրոնա-բարոյական և հայ ու օտարազգի սրբերի կենսագրական թեմաներ: Նա հեղինակ է նաև բազմաթիվ բանասիրական, գրական, ուղեգրական, հուշագրական և այլ տեսակի հոդվածների:

Տ. Շնորհք Պատրիարք իր 55 տարվա հոգևոր բարվոք ծառայության ընթացքում ստացել է մի շարք պարգևատրումներ, այսպես օրինակի համար արժանացել է Վազգեն Ա Հայրապետի և Մոսկվայի ու Համայն Ռուսիո Պիմեն Պատրիարքի պանակներին, Վատիկանի Հովհաննես-Պողոս Պապի, Կ. Պոլսի Աթենագորաս Տիեզերական Պատրիարքի, Քենթրբերիի Արքեպիսկոպոսի և Ասորիների Պատրիարքի խաչերին, Սեն Լազար Ասպետական կազմակերպության շքանշանին և այլն:

Թուրքիո հայոց Ամենապատիվ Տ. Շնորհք Արքեպիսկոպոս Գալուստյանը 1990 թ. մարտի 7-ին ողբերգական և անակնկալ մահով վախճանվեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, ուր ժամանել էր մի քանի օր առաջ միայն: Հայոց Եկեղեցին մեծ կորուստ կրեց: Հակառակ իր 77 տարիքին նա դեռ առողջ էր, և Հայ Եկեղեցին տակավին մեծապես կարիքն ուներ Սրբազան Պատրիարքի ժրաջան գործունեության: 20-րդ դարի երկրորդ կեսին նա հանդիսանում էր մեր Եկեղեցու ամենապայծառ դեմքերից մեկը, որպես մաքուր հոգևորական, լավ քարոզիչ, իրավ ու ջերմեռանդ հավատացյալ, անկեղծ ազգասեր ու Էջմիածնասեր:

Օրագրության այս հատորը հագեցած է հոգելույս Սրբազանի կենսագրության իրադարձություններով՝ սկսած իր վաղ տարիքից մինչև 1944 թ.: Անձամբ միշտ դեմ է եղել շռայլ կյանքին և աշխարհիկ վայելքներին: Այս տեսակետից նա նշել է, որ հաճախ վեճի մեջ է եղել իր անմիջական ընկերների և շրջանակի հետ: Նա եղել է կայուն նկարագրի տեր մի անձնավորություն: Նա հեռու է կանգնել կեղծավորությունից ու շողոքորթությունից, նյութապաշտությունից ու փառամոլությունից: Բայց միևնույն ժամանակ անկեղծորեն նա խոստովանում է, որ «ընդհանրապես սիրած է ընկերութենեն կամ հավաքույթներեն հեռու ապրիլ: Այս միտումս կյանքիս վրա մեծապես ազդած է: Ատոր իբր հետևանք նա եղած է ավելի անհամարձակ, ավելի ինքնամփոփ, ինքնակեդրոն» (էջ 41):

Դեռ երիտասարդ՝ 22-ամյա Տ. Շնորհք աբեղան իր օրագրություններում գրում է իր մտածումների, հոգեկան վիճակի, ներաշխարհի, ցանկությունների, որոնումների, կրոնական վիճակի, փիլիսոփայական և ընկերային հարցերի մասին: Խոսելով նյութապաշտության և քրիստոնեության տարբերության մասին, 1935 թ. նոյեմբերի 24-ին նա գրում է հետևյալը. «Արդարև, իմ փորձառությամբս ալ կհասկանամ, թե եկեղեցական ներկա դրությունը բոլորովին հեռու է հոգեկան բարձրագույն ձգտումներուն և պահանջքներուն գոհացում տալե» (էջ 86):

Հայր Շնորհքը, որպես հոգևոր զինվոր Հայ Եկեղեցու, մեկ ձեռքին

խաչ ունի բռնած, իսկ մյուսին՝ գրիչ: Խոսելով օրը-օրին գրած իր օրագրության բնույթի մասին, հետևյալն է գրում նա.

«Այս օրագրությունը զուտ և ամբողջովին անձնական հանգամանք ունի և կգրեմ միայն ու միայն ինձի համար: Ասոր համար համարձակ է հոս արտահայտությունս իմ մասին: Երբեմն ներքին կյանքիս ամենեն գաղտնի ծալքերն իսկ չեմ քաշվիր պարզելե այս էջերուն վրա, որպեսզի կարենամ այդ կերպով իբրև հայելի մը ընդմեջեն ավելի աղեկ նշմարել հոգիս և ավելի դրական գաղափար մը կազմել անոր մասին: Որով այս էջերը օրագրությունն են ավելի հոգեկան կյանքիս, քան առօրյա կյանքիս: Մյուս կողմե, կանդրադառնամ պատահած այս դեպքերուն վրա, որոք կշահագրգռեն զիս և անոնց վրա կնայիմ իմ անձնական տեսակետես, ինչ որ ավելի կշեշտե այս գրություններու անձնական հանգամանքը» (էջ 92):

Ընթերցասեր է Տ. Ծնորհք աբեղան (էջ 125): Շատ շահեկան և հետաքրքրական մտքեր ու խոհեր ունի իր օրագրություններում: Բարոյախոսական խորհուրդներ է տալիս և միշտ առաքինի հոգևորականի կերպարի մասին մտահոգվում:

Այսպես, Ժառանգավորացի սովորողների համար տալիս է հետևյալ խրատը. «Ազնիվ, սիրալիր և անկեղծ ըլլալ ընկերներուն նկատմամբ. հարգալիր, սիրալիր և փութկոտ մեծերու նկատմամբ. պարտաճանաչ և փութաջան իրեն տրված գործերուն մեջ: Ամեն ինչ, որ կհանձնարարվի իրեն, կարելի իր լավագույնով ի գլուխ հանել զայն, անթերի և խնամքով: Ջանասեր և համառ՝ իր դասական աշխատությանց ընթացքին, յուրջ, երկյուղած և բարեպաշտ՝ իր կրոնական պարտականությանց մեջ. ամեն բանե ավելի՝ կրոնասեր, եկեղեցասեր, այսինքն Աստվածասեր ըլլալ: Այս բոլորին վրա իշխող առաքինությունը պետք է ըլլա անկեղծությունը, ուղղամտությունը և փութաջանությունը: Ասոր պես բան մը պետք է ըլլա, ըստ իս անշուշտ Ժառանգավորաց աշակերտը» (էջ 121):

Իսկ ինչպիսին պետք է լինեն սարկավագները, որոնց մասին հետևյալն է գրում նա. «Իսկ սարկավագները, վերը համրվածներուն առընթեր, պետք է ունենան նաև իրենց աքեմին ծանրությունն ու սրբությունը: Երբեք անվայել խոսք, և կատակ չընեն աշակերտներու հետ: Պետք է ոլլան օրինակներ, տիպարներ, որոնց նմանիլ ցանկան աշակերտները: Իրենց քաղցր, սիրալիր և դյուրամատչելի վարմունքով փայլեցնեն աքեմի սրբությունն ու կարգին նվիրականությունը իրենց վրա: Վերջապես՝ գրավիչ վարքով մը ուղղակի կամ անուղղակի հրապուրեն Ժառանգավորաց տղաքը իրենց ետևվեն գալու» (էջ 121):

Իսկ ինչպիսին պետք է լինի Ժառանգավորացի փոխտեսուչը, որի մասին հետևյալն է գրում նորընծա 23-ամյա Ծնորհք աբեղան. «Իսկ փոխտեսուչը ... ինչ կատարելություն, ինչ մեծ հատկություններ, ինչ խոր հրմտություններ պետք է ունենա: Ոչ ծեր, այլ երիտասարդ մը, 25—35 տարեկան: Եթե ոչ գրավիչ՝ գեթ ներկայանալի ըլլա արտաքինով. մաքուր և կոկիկ հագնված միշտ, առանց սեթևեթի, ժպիտը միշտ դեմքին, եռանդուն, հանդարտ, անկեղծ, մաքուր հոգվով և մարմնով. տիրական՝ առանց խիստ և բուռն ըլլալու: Զափազանց համբերատար և հարատևող, հուսալքվիլ չգիտցող, երբեք խոժոռ և տխուր, հաճախ յուրջ, մանավանդ պաշտոնի վրա, գործունյա, ընկերական, առանց տղայանալու: Մանավանդ փորձառու, հոգեբանութենեն հասկցող, եթե ոչ այդ գիտությանց մասնագետ, տղոց մոտեցող, խոսող և շարունակ խոսող: Զանազան նյութերու պատմությանց

մասին պաշար ունեցող, բնական բարձր ընդհանուր զարգացում ունեցող, գործին լիովին և ամբողջ սրտով նվիրված: Սեր և հարգանք պարտադրող, առանց քովնտի միջոցներու: Ժամանակին մեծ մասը տղոց հետ անցնող: Հստակ միտք ունեցող, կացությունը անմիջապես ըմբռնող և ըստ այնմ կարգադրություն ընող. ձևակերպությանց շատ չկապվող և յուրաքանչյուր պարագային համաձայն կարգադրություն ընող, և վերջապես՝ օժտված ըլլալ այն բոլոր կատարելություններով, որոնք անհրաժեշտ են փայլուն դաստիարակ մը կազմելու համար: Վասնզի, այդ իսկ է իր գերագույն պաշտոնը և կոչումը.—դաստիարակել աշակերտները» (էջ 121—122):

Ահա երիտասարդ Ծնորհք աբեղայի նախատեսած պայմանները և պատվիրանները Երուսաղեմի հայոց վանքի Ժառանգավորաց վարժարանի սաների, տեսուչների և ինչպես նաև բոլոր մանկավարժների համար: Սրանք գրված են ավելի քան կես դար առաջ, որոնք այսօր ևս ի զորու պետք է լինեն լիովին Ժառանգավորացի, ինչպես նաև Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանի և Անթիլիասի Դպրեվանքի համար, ուր մեր Եկեղեցու համար հոգևոր սպասավորներ են պատրաստվում: Հայոց Եկեղեցին այսօր մեծ կարիք ունի հոգվով և սրտով, մտածմունքով և ձեռքով մաքուր ու նվիրյալ հոգևորականների, որոնք պետք է բարի օրինակ հանդիսանան համայն մեր ժողովրդին, խաղաղությամբ և խելամտությամբ հովվեն ու ղեկավարեն մեր ժողովուրդն ի հայրենիս և ի սփյուռս աշխարհի: Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին իր հիմնադրության 1700-ամյակը շուտով նշելու է ի գլուխ ունենալով հավատացյալ հայ հոգևորականությունը, որ լիովին պետք է գիտակից լինի իր առաքելության և ամբողջական պարտքը հանդեպ իր ժողովրդյան:

Օրագրության հեղինակը գտնում է, որ կյանքում հաջողության բանալին գտնվում է աշխատասիրության մեջ: Նա գրում է, որ պետք է «պայքարիլ ծուլության դեմ, որ մեծագույն թշնամին է մարդ էակին հաջողության» (էջ 155):

Ծնորհք վարդապետ ինքն իր հետ խորհրդածելով գրում է, որ «բարյացակամ ըլլալ ուրիշներու, մասնավորաբար տկարներու, ինկածներու և աշխարհեն արհամարհվածներուն նկատմամբ» (էջ 103): Այսպիսով նա ընթերցողներին բարի խորհուրդ է տալիս լինել բարեգութ, աղքատասեր և գթասիրտ, որ հիմքն ու խարիսխն է քրիստոնեական կրոնին:

Ինչպես հայտնի է, օրագրության հեղինակի հայրը, քույրը և եղբայրը շուտ են մահացել: Վաղաժամ զրկվել է նաև մայրական խնամքից, որով նա ստիպված ընկել է որբանոցներ, որպես իրոք մանկություն չունեցող մի պատանի, զրկվել ծնողական գուրգուրանքից ու սիրուց: «Ունեի իդեալներ կյանքի իրականության մեջ. հոդս ցնդեցան. զարնվեցան կյանքի բիրտ կարծրության և փշուր-փշուր եղան և ես մնացի առանց սիրո», գրում է նա սրտի մեծագույն մորմոքով (էջ 105): Անշուշտ այս բոլոր տառապանքները, նաև նկատի առնելով Մեծ եղեռնը, իր ծննդավայրի ավերումը, աքսորն և այլն, սոսկալի կերպով ազդել են որբ պատանու հոգեկան աշխարհի, նկարագրի ու բարոյականի, նրա կյանքի հետագա տարիների ընթացքի վրա, ինչպես նաև իր հետագա գործունեության և հոգևոր կյանքի ասպարեզի ընթացքում ձեռք բերած հաջողությունների ժամանակ:

Հոգևորականի նոր ասպարեզ մտած երիտասարդ վարդապետը մեծ գայրույթով գրում է հետևյալ տողերը. «Արդարև, շրթունքով միայն կպաշ-

տենք զԱստված և սրտով հեռու ենք անկե ... փտությունը, հոգևոր փտախտը կծավալի ամբողջ մարմնի վրա և կսպառնա անոր կյանքին» (էջ 35):

Մի այլ տեղ նա գրում է. «Եկեղեցականեն կպահանջվի ոչ թե զարգացում (եթե կա, անշուշտ ավելի աղեկ) այլ կենդանի հավատք, ջերմեռանդություն, հոգևորականություն և վերջապես հնազանդության ոգի: Եթե ատանք կպակսին մեկու մը մեջ, թող անիկա ուզածին չափ զարգացած, կրթված, նրբացած ըլլա, ուզածին չափ գիտնական կամ վարչագետ ըլլա: Ամեն բան կրնա ըլլալ, բայց ոչ եկեղեցական կամ հոգևորական: Անոնցմե պահանջվածը տարբեր բան է» (էջ 43):

Ծնորհք վարդապետը գտնում է, որ հոգևորականները պետք է մխիթարեն բանտերում գտնվող հանցագործներին, հիվանդանոցներում պառկած մարդկանց, նյութական և հոգեկան անձկություններով տառապողներին և այլն: «Ինքզինքը մոռնալ ուրիշին համար, ձեռք կարկառել ինկածին, ճամբու բերել մոլորածը, վշտակցիլ և ցավակից ըլլալ ագավորին և վշտագնյալին: Վսեմ է այս ասպարեզը երբ վերը հիշվածները մարմնացած կերևին եկեղեցականին մեջ» (էջ 58):

Նա իր ամբողջ կյանքում էլ միշտ մնաց համեստ, խորշեց փառասիրությունից և որքան բարձրացավ՝ ավելի պատասխանատու պաշտոններ և աթոռներ գրավելով, նա մնաց նույն համեստ ու ներամփոփ հոգևորականը, որով նա հավատարիմ մնաց 22 տարիքում իր դավանած հավատամքին:

Օրագրության գրքի հեղինակ երիտասարդ վարդապետը, կարդալով պատմիչ Առաքել Դավրիժեցու գիրքը, ուր արդարացի կերպով գրված է, թե մեր ժողովրդի պահպանությունը հիմնված է Լուսավորչի Աջին վրա, գտնում է, թե այն «նշանակ է Հայրապետական Աթոռին: Ատիկա կհիշեցնե Հայրապետին, թե ինք հաջորդն է Ս. Լուսավորչի: Անիկա կապող օղակն է մեր անցյալին»:

Նա եղավ բարի ու ազնիվ մի հոգևորական, որ իր հայրական խրատներով և ծանրակշիռ քարոզներով, հոդվածներով և գրքերով մեծ օգուտ տվեց իր ժողովրդին ու հայ եկեղեցական գրականության: Այս տեսակետից նա մեծ վաստակի տեր է: Իր սեփական կյանքով նա բարի օրինակ հանդիսացավ մեր ժողովրդին, հայ հոգևորականության և ամբողջ մեր հասարակության:

Ծնորհք Պատրիարքը այս նոր գրքով կրկնակի սիրելի ու շնորհալի մի անձնավորություն է դառնում թուրքահայ իր հոտին, ինչպես նաև հավատացյալ ամբողջ հայ ժողովրդի սրտում և հիշողության մեջ:

Վերջացնելուց առաջ այս մտորումները, ցանկալի և խիստ անհրաժեշտ ենք գտնում, որ պոլսահայությունը և տեղի հայ մտավորականությունն աշխատեն հրատարակելու նաև այս օրագրությունների շարունակությունը, ինչպես նաև հանգուցյալ Տ. Ծնորհք Պատրիարքի դեռևս անտիպ մնացած մյուս բոլոր ձեռագրերը:

Ն. ՏԵՐ-ՄԻՔԱՅԵԼՅԱՆ